07.12.23 - 11.12.23
10:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Ս.թ. դեկտեմբերի 7-ին և 11-ին՝ ժամը 10:00-ին, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում կանցկացվի ասպիրանտների, հայցորդների և պրոֆեսորադասախոսական կազմի ամենամյա գիտական նստաշրջանը:

Իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանի մեկնարկը կտրվի պլենար նիստով, նստաշրջանը կշարունակվի՝ ըստ առանձին մասնագիտացումների՝ հաշվի առնելով զեկուցմամբ հանդես գալու ցանկություն հայտնած ասպիրանտների և հայցորդների մեծ թիվը (շուրջ 40 զեկուցող): Ասպիրանտների և հայցորդների զեկույցները գիտական հոդվածների ձևով, հստակ սահմանված ձևաչափով կտպագրվեն գիտական հոդվածների ժողովածուում:

Պրոֆեսորադասախոսական կազմի հոդվածները կտպագրվեն «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» գիտական հանդեսում:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am